ՀՀ բնապահպանության նախարարություն

Empowered lives.
Resilient nations.

# Էներգետիկ արդյունավետության ընկալման վերափոխական զարգացումներ

Մարիաննա Արզանգուլյան
ՄԱԶԾ կլիմայի փոփոխության ծրագրեր՝ Էներգետիկ արդյունավետություն

*«Քաղաքային կանաչ լուսավորություն»*
*ՄԱԶԾ-ԳԷՖ ծրագրի ավարտական սեմինար*
*Մարիոտ Արմենիա, 19 դեկտեմբերի 2018թ.*

ՔԱՂԱՔԱՅԻՆ
ԿԱՆԱՉ
ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

# Սահմանումն ըստ ՄԱԶԾ-ի

Վերափոխական զարգացումները գործընթաց են, որով ծրագրային դրական արդյունքները կայունանում են որպես երկրի բնականոն ընթացքի կայուն տարր:

Դրանք ինստիտուցիալացվում են՝ արտացոլվում ռազմավարության և քաղաքականության, ծրագրերի և աշխատանքային պլանների միջոցով:

Սա ենթադրում է ժամանակի մեջ կայուն ներգործություն և չի ներառում կարճաժամկետ, անցողիկ ազդեցություն:

# Վերափոխման գործակալները

- Ազգային և տեղական պետական պատասխանատուներ
- Մասնավոր հատվածի գործիչներ
- Ծրագրի առաջընթացի պատասխանատուներ

# Վերափոխման համատեքստ

- Գործարարական՝ կազմակերպության մշակույթի նորացում
- Հանրային՝ ընդհանուր արժեքների հաստատում

# Չափորոշիչներն ըստ ՄԱԶԾ-ի

- Մարդկանց, տնային տնտեսությունների, համայնքների համար շոշափելի և կայուն բարելավում՝ առնվազն մարզային մակարդակով 10-ից 20 տարվա ընթացքում
- Զարգացման մեջ ազգային շահագրգիռ կողմերի և շահառուների բարձր ներգրավվածություն և պատասխանատվություն ստանձնելու պատրաստակամություն
- Արդյունքները մնայուն են դրանց հասնելու համար օգտագործված ծրագրի ավարտից հետո՝ կրկնօրինակման լայն հնարավորություններ
- Արտաքին դրական գնահատում՝ «գոհացնող» ավարտական գնահատական
- Միջծրագրային սիներգիա, կլաստերային/թեմատիկ մոտեցում

# Ինստիտուցիալացում (1)

- Օրենսդրական և կարգավորող դաշտի բարելավումն ապահովում է համայնքապետարաններին, նախագծողներին, լուսավորության սարքերի արտադրողների և ներկրողներին հստակ ցուցումով ԷԱ բարձրացման վերաբերյալ:
- Պրոֆիլային ԲՈՒՀ-երի կրթական ծրագրերի վերանայումը, դրանցում արդի զարգացումներին անդրադարձող գրականության ներառումը նպաստում են շրջանավարտների որակի բարձրացմանը  և հզորացնում են դասախոսական կազմի կարողությունները:

# Ինստիտուցիալացում (2)

- Լուսատեխնիկական լաբորատորիան, զինված ոլորտի արդի զարգացմանը համահունչ, ներդնում է նոր մշակույթ. փորձարկել և սերտիֆիկացնել արտադրանքը դա ձեռք բերելուց, վաճառելուց, օգտագործելուց առաջ, հատկապես ստուգել դրա ԷԱ չափանիշները:
- Համայնքների զարգացմանը նպաստում է ցուցադրական նախագծերի ընդլայնումն ու կրկնօրինակումը, ապահովելով լուսավորության համակարգերի ավելի երկար շահագործում, բնակիչների համար ավելի բարձր հարմարավետություն, ճանապարհների ապահովություն:

# Ինստիտուցիալացում (3)

- Ֆինանսական տեսանկյունից շրջանառու հիմնադրամները առկա միջոցները ԷԱ նախագծերի օգտին վերաբաշխելու նորարարական թափանցիկ գործիք են:
- Մշակութային առումով այդ հիմնադրամները ցույց են տալիս թափանցիկ աշխատելու հնարավորությունն ու միջոցները, նպաստում են ԷԱ նախագծերի ընդլայնմանն ու տարածմանը:

# Վերափոխության հաղորդակցում (1)

*ճշգրիտ ընկալում և գործնական լուծումներ*

- ուղիղ վաճառք (direct sales). գործնական հանդիպումներ, դասընթացներ և ուսուցողական շրջայցեր, շահառուների տեխնիկական աշխատակազմի վերապատրաստում,
- վաճառքի խթանում (sales stimulation). մասնագիտական, տեղեկատվական, ուսուցողական, վերլուծական հրապարակումների մշակում և հասցեագրված տարածում,

# Վերափոխության հաղորդակցում (2)

*ճշգրիտ ընկալում և գործնական լուծումներ*

- գովազդ (advertising). համացանցով և հեռուստատեսությամբ ընտրված ցուցադրական նախագծերի և ծրագրի ձեռքբերումների մասին տեղեկության տարածում, էքսպոներում և լայն ընդգրկվածության թեմատիկ միջոցառումներում մասնակցություն,
- հրապարակայնություն (publicity). ծրագրի նորությունների, հաջողության ակնարկների, ԶԼՄ կողմից լուսաբանված տեղական և միջազգային թեմատիկ զարգացումների հրապարակում ծրագրին հասանելի տեղական, տարածաշրջանային և միջազգային նշանակության կայքերում, նյութերի տեղադրում սոցիալական ցանցերում և YouTube կայքում:

# Հասարակական հարցումներ՝ ՀՀ

| Բնութագիր | 2015թ. | 2018թ. |
| --- | --- | --- |
| Մասնակիցների թիվը | 2,600 | 2,098 |
| Իրազեկություն ԷԱ առավելությունների մասին | 62% | 67% |
| Հարաբերականորեն բարձր գնով մտահոգվածություն | 50% | 20% |
| Լուսադիոդային լուսատուների և լամպերի օգտագործում | 6% | 13% |

*Լուսադիոդային լուսատուների և լամպերի որակի հետ կապված մտահոգվածությունը չի փոխվել՝ 6%:*

# Գործարարների հարցում՝ Ֆորբս

| ↓ | Վերափոխման դրդող ուժ | Բարեհաջող վերափոխման գրավական | Հաղթահարելու խոչընդոտ |
|---|---|---|---|
| 1 | Կարգավորող դաշտի փոփոխություն | Նախագծեր իրականացնողի ճիշտ ընտրություն | Որոշում ընդունողների հակասական տեսլականներ |
| 2 | Մրցակցության աճ | Անհրաժեշտ ռեսուրսների առկայություն ի սկզբանե | «Հարվածային» կատարողի բացակայություն |
| 3 | Նոր կամ փոփոխվող տեխնոլոգիա | Գործընթացի գնահատման համար տվյալների շարունակական հավաքագրում | Ռեսուրսների սղություն |
| 4 | Հաճախորդի կարիքների կամ սպասումների փոփոխություն | Աշխատակիցների հետ որակյալ հետադարձ կապի ապահովում | Անարդյունավետ կատարում, ընթացակարգային թերացում |
| 5 | Ոլորտի խաղացողների խոշորացում | Նախագծի վերահսկման թիմի ճիշտ ընտրություն | Անհրաժեշտ տեխնոլոգիայի բացակայություն |

*Ըստ **106** գործադիր տնօրենների՝ առնվազն 5 մլն ԱՄՆ դոլար հասույթով ընկերություններից, 2014թ.*

# Գրականություն


- Supporting Transformational Change: Case Studies of Sustained and Successful Development Cooperation, UNDP, 2011
- Transformational Change: What Works – and What Can Doom the Initiative, Forbes Insights in association with Medidata, 2014
- Հասարակական հարցում համատեղ Երևանի քաղաքապետարանի հետ, «Էմ-Փի-Ջի» ընկերության կատարմամբ, 2018թ.
- Հասարակական հարցում «Տնտեսական զարգացման և հետազո-տությունների կենտրոնի» կատարմամբ, 2015թ.
- «Քաղաքային կանաչ լուսավորություն» ՄԱԶԾ-ԳԷՖ ծրագրի տարբեր տարիների հաշվետվություններ

# Շնորհակալությո՛ւն

**www.nature-ic.am**